532 Եկա Քեզ մոտ պայծառ մի օր,

1. Եկա Քեզ մոտ պայծառ մի օր,
Տխրությունս չթաքցրի,
Ասացի՝ Տե՛ր, ընդունի՛ր ինձ,
Եվ Դու ձեռք մեկնեցիր:
Քեզ հետ եմ ես միշտ ապահով,
Լինի փոթորիկ, թե ձյուն,
Եվ միշտ ուրախ եմ ես լինում,
Երբ իմ կողքին ես Դու:

Հիսո՛ւս, օ՛, Հիսո՛ւս,
Փափագում եմ Քեզ տեսնել,
Հիսո՛ւս, օ՛, Հիսո՛ւս,
Ընդմիշտ Քեզ հետ կուզեմ լինել:

2. Նորից անցավ ահա մեկ օր,
Ինչպես օրերը բոլոր,
Նույն տխրությամբ ես լցվեցի
Առանց Տեր Հիսուսի:
Քեզ հետ եմ ես միշտ ապահով,
Լինի փոթորիկ, թե ձյուն,
Եվ միշտ ուրախ եմ ես լինում,
Երբ իմ կողքին ես Դու:

3. Չեմ մոռանա սերդ երբեք
Եվ Քո գամված ձեռքերը,
Ու Քո արյունը, որ տվեց
Փրկություն տանջանքից:
Հանդիպման պահ կգա նորից,
Եվ կտեսնեմ ես այնտեղ
Իմ Քրիստոսին, իմ Տեր Փրկչին,
Որ կյանքը տվեց ինձ: